թեան դլուխ են «եւրոպականացած» նոր Թիւրքերը, նրանք՝ որոնք իրենց հասարակական ու քաղաքական դաղափարներն իբր թէ քաղել են Ինցիկլոպեդիստներից, Վոլթերից, Ռուսսոից և Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնից, Ջարդուող անմեղների թիւը անցնում է միլիոնից... Թիւրք պատմութեան փիլիսոփայութիւնն է այս յարաճուն արիւնը, եւ դա միակ յառաջադիմութիւնն է իրար յաջորդող օտտոմանեան սերունդների:

Ջարհուրելի փաստ է Թիւրք ժողովրդի բարոյականի ու մտայնութեան համար Ջարդերի այս յարաճուն ուժդնութիւնը: Ժամանակներն առաջանում են, ազդերը քաղաքակրթական տասարէդներում հրաչքներ են դործում. իսկ Թիւրքիայում քանի բազմանում են մտաւորականները, քանի աճում են քաղաքակրթական ու մշակոյթի փորձերը, այնքան աւելի խոշոր խժդժութիւնների է մղւում Թիւրք ժողովուրդը:

Ահա այն արիւնոտ, դարշելի շաղախը, որով Ղազին փորձում է «նոր ազդ» կերտել:

Անդորայի այսօրուան վարիչների մէջ կա՞յ մէկը, որի ձեռքերը հայի արեան մէջ թաթախուած չլինեն:

Եւ ինքը՝ այդ փառահեղ Ղազին, որ այժմ եւրոպական դլխարկ ունի եւ բեղէնդօդ, մի՞թէ նոյն այդ կասկածելի սերնդի մէջ չէ. Կարսի եւ Ղարաքիլիսայի ջարդերը, հայ ժողովրդի փէրիշան վիճակը, նրա կայքի, դոյքի ամենօրեայ թալանը Մուսաֆա Քեմալի իրական փառքն են կազմում Թիւրք ժողովրդի աչքում:

Թիւրքիայում դործող ներկայ ամբողջ սերունդը սնուած, դաստիարակուած է ջարդերի հոդերանութեամբ:

Հանրապետութիւնը ոչինչ չի փոխի:

Դա ծախու չողչողուն ապրանք է դրսի աշխարհի համար:

Եւ վաճառքն սկսուած է եւրոպական շուկաներում:

Թիւրք առաջին դեսպանը Ֆէրիդ բէյ, որ Փարիզ յայտնուեց հաշտութիւնից յետոյ, անհընարին ցինիզմն ունեցաւ Ֆրանսայի հանրապետութեան նախագահի ընդունելութեան իր պաշտօնական ճառում յայտարարել, թէ «Թիւրք ժողովուրդը Արեւելքում եւրոպական քաղաքակրթութեան առաջապահն է»:

Գրեթէ միաժամանակ, 1925 թուին, Թիւրք լուսաւորութեան նախարար Համդուլլահ Սուբհի բէյ Պոլսի համալսարանում յայտարարում էր, թէ «ժամանակակից Թիւրքիան Արեւմտեան քաղաքակրթութեան առաջապահն է Արեւելքում... Թիւրքիան հզօր է այն հաստատութիւններով, որ նա վերցրել է Արեւմուտքից, ինչպէս իր դպրոցները, իր սպաները եւ իր կառավարութեան սկզբունքները»:

Իսկ Գօրինին պատասխանում է, թէ «բընութեան բոլոր դաղանները Թիւրք կառավարութեան ան լամներ են»...

Եւ Մանդելչտամ, թէ Թիւրք ժողովուրդը «տակաւին ստեղծագործող հոդի չունի»...

Աւա՜ղ, վայրենի բնազդները հրամանով չեն փոխուում, նոյնիսկ Ղազիի հրամանով:

Թիւրք ժողովուրդը ծոմն է նետուել քեմալիզմի կամքով Դլխիններ հետ լողալու համար, բայց աչքերը աւազուտ ակերից չի հեռացնում. թեւերը թափ ի թափ ու անճար հեւում է անծայրածիր ջրերի մէջ եւ ատում է իր հոդում, ատում նրանց ում ճգնում է նմանել:

Թիւրքը ատում է Եւրոպան ինչպէս կըրկէսի կենդանին հանդիսականներին ու իր տիրոջը:

* * *

Ասացի, որ քեմալական հանրապետութիւնը իր եւրոպական code civile-ով իր եկեղեցու ու պետութեան բաժանումով, իր արդիական կարդերով, իր ներքին աշխարհիկ օրէնքներով, իր խալիֆայութեան ու սուլթանութեան ջնջումով, իր եւրոպական դլխարկներով սոսկ արտաքին շուկայի համար դրաւիչ ապրանք է: Մի դարուց ի վեր իւրաքանչիւր տասնքսան տարին մի անդամ Թիւրք կառավարութիւններ կատարել են աշխարհը պատրելու այս փորձը:

Արդարեւ 1839 թուին հռչակուեց համբաւաւոր Թանզիմաթը. 1856-ին՝ Խաթթը-Հիմայիւնը. 1876-ին՝ Միդհատ փաշայի Սահմանադրութիւնը. 1895-ին՝ հայկական բեֆորմների ծրագիրը. 1908-ին՝ Երիտ. Թիւրքերի Սահմանադրութիւնը:

Մենք տեսանք դրանց բոլորի հետեւան-